



05/560-17  
7/05.1/491-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 37-ՂԽ

ք. Երևան

<20> 01 2017 թ.

ԵԳՈՐ ՆՇԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 51-րդ կետի 5-րդ ենթակետով, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 5-րդ կետի պահանջով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի հունվարի 20-ի 01/13/1/152-17 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 21-2.2-51) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Եգոր Նշանի Անտոնյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝ աշխատավարձի վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

Հիմք՝ Ե. Անտոնյանի դիմումը:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. Հայրապետյան